

## ՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ

### Պ-ԻՐ-ՎԱՍՏԱԿ ՌՁ

Առաջին բանաստեղծն յոյն ըստ ումանց Կալդրութեան գրեց մշակութեան կարեռ բութեան վրայ, խառն դիցաբանական վիպասանութեամբ, և իրմէ ետև եկողքերթողք, վիպագիրք, իմաստասէրք և բնախօսք մկան աւելի ճոխաբար ճառել նոյն նիւթոց վրայ:

Այսպէս նոյն նիւթերու վրայ առանձին գրող հեղինակք յիշատակին ՚ի հնոց Արիստոտէլ (384 ն. ք. գիրիստոս), և թէոփրաստոս՝ զոր աւելի բնապատում կրնանք կոչել, իր բուտոց, կենաննեաց, հանքաց, հողմոց, որումանց և քարանց վրայ գրելուն պահանառու: Խոկ՝ ի լատինաց բազմագոյնը յիշատակուին. ինչպէս են՝ կատոնե, վարդն և Վիրգիլիաց աշխարհածանօթ Մշակականքն, կողոմնելս, և ՚ի մասնաւորի Արքույթու:

Այս յոյն և լատին հեղինակներն թէպէտ իրենց մատենից մէջ ամիսոփած են մշակութեան վրայ ճառեր և վարդապէտութիւն, բայց ամրողական մարմին մը ճեւցած չէր այս ուսմունքը յառաջքան զժ և ծն դարս յիտ Գրիստոսի, գոնէ ճեռքերինիս ունեցած վկայութեանցն նայելով:

Բայց անելէ ետև առաջին մեզի ծանօթ վաստակոց զիրք, որ յոյն ձայնիւ կը կոչուի Գեառուռաձ, զանազան հեղինակներէ ժողովուած և ՚ի մի ամիսոփուած յանուն կոստանդին կայսեր կոչուածն է, զօր ումանք չափազանց հնացընելով՝ համբեցան կոստանդին Պոգոսատանի (զրեթէ ՚ի Են) բայց այլք աւելի չափաւորելով՝ և բնագրին յառաջաբանութեան վերջին տողին համեմատ՝ կոստանդին Միհրանածին (Պորդիւռութենայ) համարեցան (յետ 911 թուականին). և յի-

րաի, այսպիսի վերջով կը կնքէ իր յառաջաբանը. « Այլ համեսցիս, ով արդարամիտ տէր կոստանդին, ընդ գեղեցիկ հիւս ծիրանւոյ ։ — արդ այս այլաբանութենէս և հիւսս ծիրանւոյ ։, իմացան ումանք զԾիրանածինն կամ զՊորդիւռութենն զլուստանլին կայսրն:

Թողով այս քննութիւնը, աւելորդ է ըսէլ թէ հարկաւ ոչ կայսրն ինքնին կ'իմացուի որ ժողոված ըլլայ այս Մադիաբազու, այլ ուրիշ մը գրած ու կայսեր ընծայած, կամ թէ աւելի հաւանական կայսեր հրամանաւու ձեռք գարկած ըլլայ այս գործին ։ :

Կը մնայ մեծագոյն ինդիրն թէ ովէ է արդեօք այս գրոց հաւաքովն: Ոմանք շատ հին ժամանակներ ելլայով՝ կարծեցին թէ ըլլայ կոստիսու մը ուտիկցի, զոր և Վարրոն կը յիշէ իր Մշակական գրոց մէջ. բայց այս կարծեաց անհիմն ըլլալը ցուցընելու շատ այխատանք պէտք չէ. բաւական է միայն գիտել՝ որ բնագիրն շատ տեղ սյնակիսի անձինք կը յիշէ՝ որը յետ Վարրոնի ապրեցան, և ամանին նաև յետ Քրիստոսի: Հստ Փոտոյ, որուն համաձայնի և Հայ թարգմանութիւնը, հաւարու է գրոցս՝ Վիհուանիու Անատոլիան Պիրիբացի. « Վինդակոսի « Անատոլիայ Պերիթացւոյ՝ հաւարումն և մշակական վարդապէտութեանց ՚ի հասալու կամ ՚ի մասունս» Ժի. կարգացի և այս մատենան՝ որ խմբագրեալ ՚ի գրոցն և Դեմոկրիտաց, Ափրիկանոսի և Տարանտոնոսի, Ապոլոյոսի և Փոլորենտիոսի և Վաղեսի և Լեռնի և Պամիկւլոսի և Դիո-

1 Բոտ գիտականին Վալէսիոսի, կայսրն ինքնին է հաւաքովն:

« փանեայ » : Այսպէս մեր վաստակոց դրոց թարգմանութիւնն ալ գրքին վերջը կը նշանակէ նման անուանակոչութեամբ, բայց քիչ մ'այլայլեալ.

« Այս գիրք Պօնիոսի Անագալիոսի, որ ՚ի քաղաքէն Պէրութայ, զոր շինեաց յառ զագս տնկոց և վաստակոց մարդկան, և անուանեաց զատ վաստակոց գիրք, և հաւամառատեաց ՚ի Ֆլորնդինոսէ և ՚ի վառ զլողիոսէ և ՚ի Դարրնդիրոսէ և յալոց բամաց յոյժ պիտանի, և ՚ի յընորելոյն Նիկորիոսէ . Բաժանեաց զատ ՚ի չորք-տասան գլուխս :

Այս կտորիս մէջ երկու անուն ինձի անսույց մնաց, Պօնիոս և Նիկորիոս, առաջինն քովի անունէն կ'ենթագրեմ թէ պիտի ըլլայ Վինդանիոս (Անասովիոս Պէրիթացին ըստ Փոտայ), թէպէտ նմանահնչումն անուամբ կը գտուին ուրիշ հեղինակը ալ, Պոմպոնիոս և Պորիսէ մը զոր Սուրբաս միայն յիշէ : Իսկ Նիկորիոս չեմ կրնար հաւատել, կամ կողումելլա է այս գիտութեան վրայ գրող երեկելի անձն, կամ ուրիշ Նիկոր անուամբ մէկն : Իսկ միւս անուննեն ինչպէս Փոտայ վկասութեանը մէջ տեսանոր, Ֆլորնդիրոս (Փլորենտինոս), Դարրնդիրոս (Տարենտացի) : Իսկ Վաղեղիոս Փոտայ վաղէս կործան է, թէպէտ կայ ՚ի Փոտ և Լուն, Լունդոս :

Սակայն աստիցմէ աւելի ընդհանուր եղած կարծիքն է, թէ կասափանոս Բասոս Արուաստիկոս՝ Պորփիռոսէն կայսեր հրամանաւ քաղեց հանեց ՚ի հին մատենից՝ որ մշակութեան վրայ ճառէին, ինչ որ պէտք էր երկրավաստակութեան գիրք մը ձեւացընելու . և թէ այս գործս ՚ի կոստանդնուպոլիս եղաւ՝ յայտնի է բնագրին երկուտասներորդ Գրքին Աղմանէն, յորում առանձին կը վարդապետ թէ ՚ի Կոստանդնուպոլիս իւրաքանչիր ամիսի ինչ բցյսէր պէտք է սերմանել և անհել : Այս մեր բացատած յօյն բնագրին է՝ կասափանոս Բասոսին անուամբ տպագրեալն ՚ի Լիբրիա՝ ՚ի 1781 : Իսկ կասափանոսի ժողոված հեղինակներին զանոնք միայն հօս յիշենք, որ աւելի երեկելիք են և կը գտուին նաև ՚ի մեր թարգմանութեան : Ծորոց գլխաւորն, որ թէպէտ ՚ի Հայ թարգմանութեանս չունեանք յայտնի յիշատակուած սակայն ուրիշ մասամբ ծանօթ է մեր նախնեաց, է Յուլիոս Ոլիդիկանու քրիստոնեայ, ակնաւտեսն Բարգածանու՝ Ալեքսանդր Սևերոսի ժամանակ. սա գրեց Հեղամատեան ժամանակադրական, որ թերեւս նոյն գիրքն է ուսկից մեր Խրենացի Պատմահայրն քաղեց իր պատմութեան մաս մը, և կ'ըսէ . « Ի հինգերորդ գրոցն

Սկիրիկանոսի ժամանակադրի » . (Խոր. Բ, Ժ) : Իսկ բնական զիտութեանց վերաբերեալ մասունքն կը գտուին նոյն տնձին Յանախապատում կոշուած գրոցը մէջ զոր ումանք ուրիշի կարծեն : — Երկրորդ անձն է զոր և վերը յիշատակնեցինք՝ Անատոլիոս, որուն թէ անուանը և թէ ժամանակին վրայ շատ չփոխութինք ծագած են զիտանոց մէջ : այս միայն նշանակենք՝ որ Եւնաբիոս ՚ի վարդ Պրոյերեսեայ հայկաղնոց կը մէջէ Անատոլիոս ՚ի օրէնսգէտ, վախճանեալ ՚ի 360 : — Ակուղիյոս երեկելի և ծանօթ անունն ՚ի մատուցագրութեան Հռովմացեցոց, ծագկեալ Այտովնոտսի Պիտոսի ժամանակները : Զայտ անձս զանատան հընչմամբ կը յիշատակէ և կայ թարգմանութիւնը, Ազոյու, Ազալիոս, Ապորյայոս, Ապաղիոս, երբեմն ալ բուրրումին այլափոխեալ Պօրոս Կամ Պատրոս Հոսումն, թէ որ չէ ուրիշ անձ մը :

Դիմագերոն, զոր կը միշէ և Տերուուղիանու (Յ.Ղ. Հոգւոյ) և այլք : Իսկ ՚ի Հայն կայ Տիմոֆար, որ է անցուշտ նոյն անուան այլշերպանն : — Բայց առ հինոն անձանօք չէ Գիմերաքս կամ Տիմոփարէն անունն : Դիմոկրիտոս Արգերացի, զոր Հայն կը գրէ : Դիմոկրատէս :

Ֆլորենտինոս, զոր կը միշէ և Տերուուղիանու (Յ.Ղ. Հոգւոյ) և այլք : Իսկ ՚ի Հայն կայ Տիմոփար, որ է անցուշտ նոյն Ափիդրոս ալրուսացի, վինտորեալ Մեծին կոստանդնուպոլիսի ժամանակ՝ սկիւթական պատերազմին մէջ, որ և ըստ վկայութեան Սուրբասայ՝ գրեց Ջիադարմանորեան գիրք մը, և ուրիշ վարդապետութիւնը :

Որրիդաս տարեննտացի և Հերակլիոն տարեննտացի : մերս անորոշակի կ'ըսէ Տարանտինու (կամ ըստ իրեն գրութեան Դարրնդիրոս) : բայց գիտելի է որ յօյն վերջաւորութիւնն զհայրենիս ցուցընէ, և ոչ մասնաւոր անձ մը :

Վաշէկան, հոչակեալ հոռվմայեցին, զոր Հայ թարգմանն կը յիշէ այլանդակեալ անուամբ մը՝ Պորլիշեան կամ Պորմենիոս Հուսումն, որ նոյնը պիտի ըլլայ անշուշտ :

Զրադաշտ, ըստ Սուրբասայ՝ մարապարսիկ, զանազան գիրք գրեց « Կաղազս ականց պատուականաց, և Աստեղագիտականք » . որք՝ ըստ արդի քննութեան ամենն ալ իրենն չեն . իսկ և Յաղազս զօրութեան խոտոցու կոշուած գիրքն, որ Զրադաշտայ կ'ըս-

1 Աքէնուրու նման է գարձեալ Անգլիան անուան, զոր վերն յիշատակնեցիք :

ծայութի, ըստ արդեաց Զենտավեստայի մասն համարտի:

Ասոնցմէտ գուրս հայ թարգմանութիւնը ստէպ կոչէ Պօրս, Պօրս, Պարս անուամբ մէկն, որ կամ Ապուլիյոն է, և կամ ուրիշ նոյն անուամբ մէկն, զի՞ ի պատմութեան յիշին կրկին Պօրաք (Bulus) <sup>1</sup>:

Գալով հայկական օրինակին կամ թարգմանութեան՝ զոր ձեռքերնի ունինք, չենք կրնար բացայատ ծանօթութիւն մ'ընծաւ յել ընթերցողաց, ոչ թարգմանու ովք ըլլալուն և ոչ թարգմանութեան ժամանակին վրայ. բայց որչափ որ ՚ի յոյն բնագրէն կ'երեւայ, ջզիւ թարգմանեալ չէ ՚ի յունականէն, այլ աւելի հաւանական է կարծել թէ արարական աղբիւրէ մ'ըլլայ: Վասն զի կը տեսնանք յայտնապէս ՚ի մեր պատմութեան՝ որ այս ոճի գրութիւնք կամ թարգմանութիւնք՝ մանաւանդ յետ ծ և ԺԱ. գարուց՝ արարական կամ պարսկի լեզուն եղած են, թէպէտ և անոնց այ յունական ընապէրն գտնուի. և ասոր պատմաստ կրնանք համարիլ յոյն լեզուի հմտութեան պակասութիւնը որ թդարէն ասզիս կը սկի տիրել Հայաստանի կողմէրը. մինչդեռ անդիէն կը սկսի տարածուիլ արարականն իրեն արշաւանքով տիրելով մեր աշխարհին և լեզուին ալ, Ասոր օրինակ. Մխիթար Հերացին Գրիգոր Տղային փութովը « Թարգմանեց և գրեց » իր Զերմանց Մխիթարյարէն՝ ՚ի հոռոմ և յարապիկ և ՚ի պարտիկ գրենաց», ՚ի 1814 թուին Քրիստոսի: Մինիստր Յնեցին ծի դարու պատմին և Զպատճառու խաւարման արեգական և յուսնի ՚ի յունէ ՚ի պարուկականն թարգմանուած ՚ի պարուկականն կ'առնու կը թարգմանէ: — Յետ Հերացւոյն և Անեցւոյն կը յափորգեն Միմրտղվաթ Անաստային՝ ստորնագոյն ունով գրիչ. որ գրեց իր և Անգիստաց անպէտ Բժշկարանը (1476) և այլք, զորոնք աւելորդ կը համարինք կարգաւ տողել հօս:

Արդ մեր զիմաւոր պատմառն՝ որով կարծնք թէ արարացի աղբիւրէ մը թարգմանած ըլլայ՝ այս է, որ արար բառեր կը յորդեն զրբին մէջ և այն լեզուով ՚ի գործ ածէ համաստեղութեանց անուանք. զոր օրինակ փոխանակ Բազմաստեղաց՝ Կ'ըսէ. Սիրեւայ կամ Թուրայայ. փոխանակ Պըսակ համաստեղութեան յարքան կամ Ֆիքինէ, և Շուն աստեղ համար՝ Եղբիշ-իշ-զպոր. — Դարձեալ գրեթէ միշտ բուսոց ա-

<sup>1</sup> Հերացին ալ յիշէ Փօլս անունով բժիշկ մը:

նուանքը կամ սոսկ պարսկական և արաբական են կամ հայերէնն ալ միատեղ,

Երբ միսնգամ ուղենանք հաստատել թէ արաբականէ թարգմանուած է մերս, կը նամուր ժամանակ մ'ալ զնել վերիվերանց այս թարգմանութեանս: Մեր պատմութեան մէջ ինչպէս կանխա տեսանք, թերեւ չկայ ժամանակի յորում այսպիսի ուսմանց աւելի ջանք և փոյթ երեւայ, քան դշորհաւլոյն Ներսիսի ատենը, որուն խնդրանքը սկսեր էր Մխիթար Հերացին իր Բժշկարանը: Կրնայինք այս ժամանակին հանել մեր այս գիրքն ալ, եթէ լիդուն ներեր մեղ. բայց ընդհակառակն տեղ տեղ կը տեսնանք որ կը ուսմէկարանէ և այլ ազգականի աւելի կը մօտենայ. ասկայն այսու ամենայնիւ չենք ալ կրնար Ամիրտոյլ վաթի և անոր ժամանակակցաց կարգը զնել:

Գիտուիլ է դարձեսոյ որ մեր Վաստակոց գրոց թարգմանիչ հայն յիշատակէ զկիլիկիա, յիշատակէ նաև զբարելոն, զնիմուէ և ուրիշ անուանն՝ որ մեր անձանաթ են. յորոց կրնանք մակաբրեն թէ իր հաւաքողն ըլլայ այն կողմերու ու գաւառաց վերաբերեալ անձ մը, արեւելի մ'արաբական, ասորական և պարսկական անուանց ծանօթագոյն քան ուրիշ գտառուաց:

Արդ այս հայկական թարգմանութեան քանի մը նօտրագիր օրինակ ունինք ձեռքերնի, յորոց մին լեզուաւ և ոնով աւելի հնաւթեան երեսոյթ մը ցուցընէ քան զալս. և կ'երեւայ գարձեալ թէ զանազան ձեռք խանուուած ըլլայ գրութեանը մէջ, տեղ տեղ ունցին զանազանութեանը պատճառաւ: Այս ընտրելազոյն օրինակին մէջ կը գրունաքի վերոյիշեալ վերջարանն, յորում կը նշանակուին գրույս հեղինակն և աղբերքն ուսափի քաղաքարողն Տիրացու Գէորգ Պալատոցի, աւելցուցած է յիւրմէ պատիկ բառարան մ'ալ կարեւոր բառից, որ և տեղ տեղ մեղի սկսանի կ'ըլլայ:

Դնենք այս տեղս ՚ի զուարձութիւն աղգային բանասիրաց՝ Վաստակոց գրոց այն մասն որ խաղողի և որթոյ կամ այգեաց դարմանոց վրայ կը ճառակ. որ և աւելի հետաքննական է թէ այգեաց անուանց և տեղեաց նկատմամբ, և թէ կրնալով աւելի քան զալ մասունս բացայացափէ յոյն բնագին օգնականութեամբ: Բնագրին հինգերորդ գիրքը կը խօսի ամբողջ այդեաց տնկելու, մշակելու և կթելու և ամեն ա-

նոնց վերաբերեալ բաներու վրայ. իսկ ՚ի սպառոցն է վասոն զի հայերէնն հայում ըստ ընտրելագոյն օրինակին կը ՚ի զիրս բաժնուած չէ, այլ միայն ՚ի դրուիս սկսի ՚ի Դուռն Եղի կոչուած գլխէն, և ըստ կամ ՚ի Դուռն, ընդ ամենն 300 կամ 338.

## ԴՈՒՌՆ ԾԴ ԵՐՈՐԴ.

Յաղագս ճանաշելոյ զայգեաց պատշաճաւոր գետինն : — Քան զամենն լաւն՝ սեն է և մաքուրն , որ կազմին <sup>1</sup> և կաւոտ չինի . և երբ հոր փորես՝ նա ջուրն քաղցր և անուշահամ լինի , և ոչ լինի աղի, լեզի կամ ծանրահամ. յայսպիսի գետինն <sup>2</sup> ոչ երաշտն մնաս առնէ և ոչ անձրեն : Բայց զայգոյ համար գետինն պարտ է լաւ փորելով՝ իմանալ զիսրութիւնն և զհամն , զի մի լիցի երեսքն աղէկ և տակքն վատիժար , կամ ատակն աղէկ և երեսքն վատ . և այս այսքան :

## ԴՈՒՌՆ ԾԵ ԵՐՈՐԴ.

Յաղագս ցեղից և ազգաց խաղողից և տնկոց , եթէ որ ազգ որ կերպ գետնոյ պատշաճի : — Զի պարտ է զիտել որ զսե ազգ խաղողն ՚ի սպիտակ գետին պարտ է տնկել , զի անդ լաւ գարմանի , և զսպիտակ խաղողն ՚ի սե գետինն , զի և այս անդ լաւ գարմանի : Բայց եթէ ՚ի սպիտակ գետինն պատառած մքուա <sup>3</sup> լինի , նա լաւ է սակաւ մի . բայց թէ լինի՝ ամեննին պիղծ է . մի անդ հալսա առներ <sup>4</sup> : Նոյնպէս և ՚ի չոր , նօսր և աւագուտ գետինն՝ չչ պարտ անկել , քան զայն ազգ խաղողն որ որթն սպիտակ զոյն լինի , և պտուղն բոլոր և պինդ ՚ի սե պաւպով կերպ <sup>5</sup> . և ՚ի նօսր գետինքն ազգ մի սպիտակ խաղող կայ , որում Հոռոմն ատինաս ասէ , և այլ կայ որում փուրփուրզնա ասեն , և այլ՝ որում ձաւրարս ասեն <sup>6</sup> : Զայսոսիկ թէ տնկես՝ լաւ է քան զայլ ազգ . և արժան է որ զամեն ազգ մեծապտուղ և ջրջրուկ <sup>7</sup> խաղողն ՚ի նօսր և ՚ի ցամաքային վայրս անկէ ոք . և զցամաքն ՚ի գէ և ՚ի յուժով գետինն , որ այն զայն կեցուցանէ և այն զայն . զի թէ զգէնն ՚ի թանձր գետինն անկես՝ նեխեցուցանէ , երկու զիջութիւնն զպատուղն աւիրէ : Նոյնպէս և թէ զցամաք խաղող ազգն և զանջուրն ՚ի նօսրն՝ նա երկու ցամաքա . յինքն զպատուղն ցամաք և անջուր առնեն , և չօգտիս բնաւ . ՚ի վաստակոյն : Եւ գի-

<sup>1</sup> Այսու օր . Խաւէն . յոյնը կըսէ ուսխո՞ւ և աօլլաօնոց , պինդ և քալուսու (ըստ Տիրացու Գէորգայ բառարանին) :

<sup>2</sup> Այսու օր . այսպիսի գէրնոյս . . . և որան վարելու . յապան :

<sup>3</sup> Այսու պատառուածք , ձեզք :

<sup>4</sup> Հայու առեւ ըստ իմասի տեղոյն նշանակէ անիւլ :

<sup>5</sup> Այսուինքն պլպեղ , ողէնու . յոյնն կըսէ՝ որուն եւս ողիոյն :

<sup>6</sup> Այդ երեք ազգ սպիտակ խաղողն ՚ի յոյն զանազան անուանն կոչնի . սպիտակ ՚է թերես յն . փսիթիս (Փնձա) որթն , զըր յիշէ և Վերցու . Աշ. Բ. 93. և որ թուի գինի չամչենէն . — Փուրփուշ . նային աել՝ յոյն կը գնէ կորկիւթական , այս է՝ Կորկիւթայի բեցք . (չօրհնչաձա) . — Խակ ճաւարս , զո՞ր միւս օր . կը գրէ ճաւարս , յոյն ունի Խալօհիւ (գեղին) :

<sup>7</sup> Զըլըն-է , նշրէ , հիւժեղ , պարարտ , ջրոս (խաղող) :

տեղի է որ բուն և լաւ գինին այն է, որում յունարէն ասեն քորդամուշ ալինօս, և լինի ՚ի ֆուսայր երկիրն՝ ՚ի յԱվինու գաւառն՝ և յայն այգեացն ՚ի տնկէն ով կարէ գտանել՝ նա լաւ է քան զամենայն տունկ. և մեղոքն ցանկան յայն պրա զոցն ճաշակել. և այնչափ պտղաբեր լինին տունկը այնովիկ՝ որ գժար երկին տերեքն. այլ շրջապատեալ ունին բազմութիւնք կուզիցն զտունկն. և պտուզքն՝ ՚ի կոյզն իրեւ զձին փայլին. և ՚ի վերայ ծառոց հանես զնոսա, կամ՝ ՚ի վերայ արիշաց. և յամինայն ժամ զտերեն քաղեն, վասն այն որ հասուցանէ զխաղողն. և երբ գինի նորա յիստակի՝ պարտ է փոխել ՚ի մրցէն և յայլ աման լնուլ: Եւ այն այդին որ ՚ի չոր և ՚ի նոսր գետին լինի դրած, նա ընդգէմ արեւոն արեգին լինի և կամ ընդ հարաւ և ընդ արեգին ՚ի մէջն, նա լաւ այն է: Եւ զամենայն առւնկ որ յօտար երկրէ յերկիր տանիս, և ՚ի խորու և յուժով գետին զնես լաւն այն է: Եւ թէ ՚ի կոնակս լիրանց լինի՝ լաւն այն է. զի արեգակն և բարձրութիւն լիրանն յօդցն ցասմանէ զերծ պահեն և փրկեն զայգին: Բայց ՚ի կատար լիրինն մի զներ, զի վատ է. ՚ի լեռնոտներն աղէկ է: Եւ թէ ցած ըլուր լինի՝ տես որ հանց տեղը լինի՝ որ երբ անձրե գայ, նա զհողն տանի: Եւ թրակի դինին լաւ տունկ է քան զինչ այլ ազգ կայ, բայց ինքնդ բարակուր լինի և վատոյժ է: և այսմ Դիմոկրատէս իմաստունն վկայեաց և ծշմարիտ է:

## ԴՈՒԻՆ ԾԶ ԵՐՈՐԴ

Յաղագս թէ յորպիսի վայրս պարտ է զայգին տնկել: — Պարտ է նայել ՚ի տեղին. թէ չերմացին լինին տեղիքն՝ նա ծմակն լաւ է, և թէ ցրտային արեգգէմն լաւ է. զի լեռանց օդն չերմայնոյն օդուտ է, և հարաւայինն ցրտայնոյն. և եթէ միջավայրը լինի տեղն՝ նա ընդգէմ արեկելիցն լաւ է, որպէս յառաջ յիշեցաք: Բայց ՚ի յայն հոդմոյն որ յունարէն արիս անուանի՝ պարտ է զայգին պատրաստ ունել: և վասն այնորիկ գորեելեան սահմանքն զովեցաք՝ զի լաւ է: Քանզի այդ հողմոյ յարենից կուտէ և խոռուցուցանէ և չոր շամիշ տոնէ զբերն և ահոկէ: Բայց երբ յարենից կուտէ լինի, նա արենմտեան օդն խոնաւ է և լաւ, զբերն առողջ պահէ և զխաղողն ջրով:

1 Այս անուանքը ստուգելու կամ գոնէ մակաբերելու համար հարկ կը համարիմ գնել բոված. գակ այս կոորին յունարէնը. « Քան զամենայն այշիս լաւ է Մրաենայն (Խորական) և այն է ՚ի իւր և ծանիս, ուստի լինի գինին՝ որ անուանելու կոչք գենրուալինն (նուծոյալորո), և յոյլ կոցմանն ուրա Ռատիքնան անուանեալ, և ՚ի Տիք (և Տիան) Պատակուակուան (Տացն), և ՚ի Հերակլէս Պոն. « առօք ազնիւ գինին և Այս բատերուսն նմանածայնութնէ կրնակը մայն մակաբերէլ՝ որ Բարդաման ալիսն նման է գենրուալինն. Փառայ կրնայ աշ նշանակել Պատուային: (բայց իշուր ՚ի յն ուրիշ անուն մ'ալ Անուան (Փառօն) անծ անօթ, Ալեքսան Գաւանական՝ Պակիագոնիոյ: Բայց լաւ ևս կրնայ սառու գուիլ այս յարաւական օրինակաց:

2 Այս ովկոյզ խաղողոց:

3 Ալիւ: սարբինայ: անմալչգ:

4 Խորաւ: խոր: խորունկ:

5 Այնպիսի:

6 Թշուի գիշի: պիտի ըլլոյ ըստ միւս օր: և ըստ յն. Թշուի չգիշի (Թրակի այգին). Ֆորւակի ձմռէօս:

և է Թշուի պիտի գիշի: պիտի ըլլոյ անուան գիշի: Թրակս կամ բաւժիչ հարուածոց օճից:

7 Վարոյժ (ուռա), տկար, անջոր, անքեզուն:

8 Ալիս անուն հոմայն է: յոյն Ենոք (Ենքօ), արևելեան հողմի:

9 Այս է զգուշանել: պահպանել:

10 Միւս օր: պարան:

11 Վհասակը:

## ԴՈՒՌԻՆ ԾԷ ԵՐՈՐԴ

Յաղագս այդեաց, որք 'ի ծովիզերս և 'ի գետեզեր լինին: — Պարտ է զիւտել որ ծովիզըն վասն իւր գիջային օդոյն՝ լաւ է այզեացն և գարմանիչ է տնկոցն: Բայց ամենայինիւ գետեզերըն վատ են և ապականիչ, մանաւանդ այն գետափն՝ որ յիւրմէ բալ և ծուխ վերանայ<sup>1</sup>, զի ծուխն ծնուցանէ զամենայն որդենային և ժմանային հարուածքն<sup>2</sup>: Եւ վասն այնորիկ յայնպիսի վայրացն փախչել պարտ է<sup>3</sup>. և ծառոց՝ գետափն ահոկ չէ, այլ օգուտ է:

## ԴՈՒՌԻՆ ԾԷ ԵՐՈՐԴ

Յաղագս այդեաց սեռից և աղդաց: — Պարտ է գիտել զի ամէն ազգ տունկ ամէն տեղւոյ ոչ պատշաճի, ոչ թէ վասն բուսանելց, զի թէպէտ բուսանի, բայց գինին վատահամ լինի: քանզի ամենայն գաւառի օդք չեն միապէս: այսափոխէ օդն զհամն գինւոյն: Ամիսն տունկ լաւ հաստատուն մնայ՝ յայլափոխմուն օդից և գաւառաց քան զայլ խաղող, և զգինին միահամբերէ 'ի գիջային, 'ի չորային, 'ի հովային և 'ի շողային վայրսն քան զայլն: Բայց սպիտակ ազգն որ մանրապտուղ է և զտողի<sup>4</sup> սիրէ ինքն և զծառս՝ 'ի շերմային գաւառուն, լաւահամ գինի առնէ. և իւր կոյզերն երկայն լինի և տակբն և ծայրբն կուզիցն միապէս հաստ և պտուղբն բոլոր. և երբ լաւ հասանի՛ կարմրագոյն լինի: Եւ է երկիր մի որ կաշի բծունիա<sup>5</sup>, և լինի անդ ազգ մի տունկ՝ որ անուանի ֆուքնի, և ինքն շոյտ հաստոցանէ զիւաղողն, և է մեծակյզգ. ամէն կուզի երկայնիքն բազկականդուն մի է<sup>6</sup>, և պտուղն բոլոր և սպիտակ, որ զկտերն ՚ի ներք կարես համարել. և ունի ինքն առաւելութիւն մի քան զայլ տունկ, զի յամէն ակնէն<sup>8</sup> որք 'ի յուռն լինին՝ երեք կոյզ հանէ, և այլ աղդերն հազիւ թէ երկու: վասն այնորիկ զսա պարտ է կուրծ հօտել<sup>9</sup>, որ շվատուժէ զտունկն. և զնկն առնէ մեծ տունկ<sup>10</sup>, և զիմակաց է ընդդէմ ամենայն ազգ օդոց, և անսադան ծերանայ. և դինքը է և անուշահամ. և զայս ազգս պարտ է հանել 'ի յարիշ կամ'ի ծառս. և այս միայն կայ, որ շատ չդիմանայ գինին<sup>11</sup>: Եւ է ազգ մի ևս զոր ամինատին անուա-

1 Այս ինքն՝ ճառը՝ իսկ ծուխ, յայն կ'ըսէ՝ ցուբա օգ, հոզմ:

2 Ուրանին և ծծմային հարասած+, յայն կ'ըսէ՝ երեկի՞քոս, ժանկ (բուսոց):

3 Միւս օր. ժուկել:

4 Հօս Ամիսն կուտած տունկն, որ է յոյնն Ամիսնիսո (Ամինօչ), վարը զանազան գրութեամբ կ'անուանէ Մշնիա, Ամիսնին և յոյնն մէկ տեղ միայն կ'ըսէ՝ Ամառա (Ամինիսա). և է այն որթն զըր և Վիրգիլիսո կը յիշատակէ իր Մշնկ. մէջ (Բ, 97), Ամիսն ուն կոչելով:

5 Ե լու աճ. ոս գտպաշ, ըստ Գեորգայ:

6 Բնուանիա, մրցա օր. կ'ըսէ Բնուանի, որ կործեցընել կուտ առյ թէ Պանձիա ըլլոյ. բայց յայն այս պէս կը պարզէ խմասը և բառերը. « է այդի 'ի ինւթանիա, որ անուանեալ կաշի վընկի կամ վընկի (Յօնանի): » արդ բծունիա՝ համարի ինւթանիա, և Փուքնի կամ Փուքնի վոլնի կոշածն, որոյ նշակութիւնն առա 'ի յն. անծանօթ է մեզ:

7 Բանկանանան մէ է, կէս կանգունէն աւելի. յն. պարզապէս՝ կանգուն մի է:

8 Ալու. աչք որթոց:

9 Կուրծ հոփէ. (յոյնը օմոտօմեն) արմատէն, խորէն հօտել. առ իսուիծ:

10 Յոյն կ'ըսէ՝ և ինքն մէծ բռնէն է:

11 Յայն կ'ըսէ՝ և զսո ապիս պարտ է հանել 'ի ծառս, ոչ չէ բնութեամբ դեսին:

Նեն<sup>1</sup>, որ չէ պայլ քան զփռքնի, որպէս գրեցաք: Եւ յամենայնի արժան է զաղէկի ազգ տունին փնտուել, զի Մաղվան<sup>2</sup> անուն ոմն գրեալ է թէ Մենիաս տունին՝ ի Ծվար<sup>3</sup> մի այզին գձ (300) ճառայ կ գինի կու տայ. և ճառայն է խդ խաստ<sup>5</sup>, և այս ճշմարիտ է: Բայց Մենիաս տնիկիս շատ փոյս<sup>6</sup> պարտ է թողուլ՝ ի հօտելն. և ինքնն առաւել լաւն և ազնուականն է. և վասն այնորիկ պարտ է ի մէջ ամենից առաւել զսա սերմաննել, տնիկել և պատրուսել և հօղով ծածկել և յերկայն հօտել քան գայլ ազգ: Եւ են ոմանք որ խիստ սակաւ կտրեն՝ ի հօտելն, զի շահասիրին՝ ի բերն, բայց միջակն լաւ է, որ զտունին և զբերն շահի:

### ԴՈՒՌԻՆ ԾԹ ԵՐՈՐԴ

Յաղագս թէ որպէս պարտ է քաղել զտունին՝ ի յայգւոյն: — Պարտ է դիտել զի յամենայն կողմանց չէ պարտ քաղել զսնկելացուն<sup>7</sup>, ոչ ՚ի ծայրիցն և ոչ ՚ի տակիցն՝ քան թէ ՚ի անկին միջոյն. և զմոտզաշ ուռն և ոչ զդահն<sup>8</sup>. զի գահն շոյտ գահանայ, և ծայրքն սակաւ բեր առնեն: Եւ լաւ տնկացուն այն է որ մէջն ուռեր լինի և կարճաստ և զորդ, և ոչ շատ հաստ: Եւ յերկայնոստ տնկացուէն, որ հաստ լինի և անգիտացն աղուոր թուենայ, պարտ է փախչիլ: Եւ չէ աղէկ որ զտունին աւելի կանուխ քաղեն, յառաջ քան զլաւ մի պտկինն երևիլն. և այն որ ճարտար շարժի<sup>9</sup> լաւ է, գու զայն ուռն քաղեա և թող. տունին՝ անհնար ՚ի մայրանէն<sup>10</sup> կոն ունենայ. և ՚ի կոնէն՝ որ է ՚ի տակըն տնկացուին մինչև ՚ի ծայրն՝ տասն ակն լինի: Եւ զկտրելն սուր կտրչով արա, և զկոնն մատին մի չափ արա, և ճեղքեա և զսրուուկն հան. և չախչախեա զտակն և ապա տնկեա ՚ի փոմն. այս լաւ բռնէ և անսիսալ: Եւ թէ ՚ի դահ այգւոյ տունկ առնուս կամ ՚ի մատզաշ այցոյ որ քան զվեց տարւոյ մատզաշ լինի, չէ աղէկ, պիղծ է:

### ԴՈՒՌԻՆ Կ ԵՐՈՐԴ

Յաղագս թէ յորժամ պարտ է զտունին քաղել. և թէ ուզես որ յամեցուցանես զտունին՝ թէ որպէս պահես: — Են ոմանք որ ՚ի զարնանային սկիզբն՝ ՚ի փետրվարի եօթն օրն սկսանին և քաղեն. և են ոմանք որք ասեն թէ երր պակէ: լաւ է առնուլ զտունին. և են որ ասեն թէ ՚ի սկիզբն. և թէ յամեցուցանել կամիս

1 Տես այս գլուխն 4 ծանօթութիւնը:

2 Մաղվան կամ Մաղան. յոյն այս անուան տեղ կը գնէ Վարրոն Հռովմայեցին, որուն կ'ընծաւ յուրի նու բովանդակ այս վարպատեատութիւնը:

3 Տես ՚ի ծան. 4. = Ճեղուն և աշ. փետխ-մ, jugero:

4 Ճառայ. բղուու. լու ամφորա.

5 Ալյու. թարգմանին յաւելուածն է. յորում խոսք՝ Քսեստ ամանին այլայլածն է:

6 Փոյք. բարունակ, ճիւղ (որթյո):

7 Տիկայոյ. կամ փնիոյ: սաս մատզաշ նորոգ տնկելի:

8 Հնացեալ, ծերացեալ:

9 Կարձիւ. սկսանէ ՚ի բողըով, պակիլ:

10 Մայքա. տեղին պատուասից ՚ի ծառս. իմաստն է՝ հարկաւ մայրանէն կոճակ կամ աչք ունեայ: — Բայց գրոցս բառերուն մէջ այս բառս նշանուած է իբրև բան կամ խոյ որմագն առանց ուստոց, այսպէս յայն բառիքն ալ երբեմն կը գործածէ նոյն մնքով նայ:

զտունկն և ապա դնել՝ քաղեա գտունկն , և զմկրառոն որբեա յիւրմէ աղէկ , և զտունկն շինեա և փոս արա և 'ի ներք զիր առանց կապելց , և թաղեա 'ի հիւթ տեղիսն , և 'ի նոյն հողն ուստի առնուս վինկն թաղես , լսւն այն է . բայց թէ շատ կամենաս պահել , թէ 'ի ներքոյ տանն թաղես' այն է լսւն : Եւ օծ զտնկացուն այս օրինակաւս . զտեղիսն որբ սրով կորած լինին՝ կեղեեա զտնկին բարունակին կեղեն , և ծեծեա զինկն մանր' և զտատապն՝ ի միասին <sup>2</sup> , և դիր 'ի պտուկ , և ջուր արկ 'ի վերայ , և եփեա մինչեւ զերդ մեղր զառնայ , և ապա օծ զտնկացուն կորուքն <sup>3</sup> , և պահեա հողով քանի ուզես , և տար յերկրէ յերկիր այսու (օրինակաւ) զոր գրեմք : Շինեա զտախտակէ սնտուկներ և ձիւթեա աղէկ 'ի գրուցէ <sup>4</sup> , և շինեա արճճեայ նոսր տախտակ <sup>5</sup> , և դիր 'ի սնտկին ոռն <sup>6</sup> , և դիր զտնկացուն 'ի ներքս , և ամուր փակեա . և խծկեա <sup>7</sup> զփակմն <sup>8</sup> և ձիւթեա , զի 'ի ներքս օդ շմտանէ , և տար քանի կարես : Երբ բանաս' նոր և թաղէ <sup>9</sup> զտանսես : Եւ են ու մանք որ ծածկմն զտակս տնկացուին՝ այն իրգն զոր Պօլոնիացիքն <sup>10</sup> կոչեն գետնա . մօրուք , և Սուրբայլք՝ սկպուս <sup>11</sup> . և այս սովորական է մեզ և փորձով որ լաւ պահէ : Եւ այլ ոմանք զփառապին <sup>12</sup> կոժէքն <sup>13</sup> փետեն 'ի գետնէն և 'ի վերայ զտունկն ծածկեն , նոյնպէս և ներքեն , նա լաւ պահէ . և թէ զնոյն ինկն փառապին դնես : Արդ՝ այս ճշգրտիւ զիտելի է , որ տնկին չորացուցանողն . և պավականողն օդն է . և անտի պարա է զինկն աղէկ պահել . և յայլ պատճառանաց թոռմի , բաց 'ի հողմոյ . նա օր մի և զիշեր մի զտունկն 'ի զնայուն ջուր զիր , և ապա հան տնկեա՝ աղէկ լինի : Եւ տես թէ գետինն ուր տնկել կամենաս չորացեալ լիցէ , և կենայ <sup>14</sup> հնար՝ որ ջրես և ապա տնկես' լաւն այն է . և որպէս յառաջն գրեցաք՝ խիստ լաւն զոր փորձեալ եմք՝ այն է , որ երբ աղէկ շարժեալ լինի տունկն՝ յայն-ժամ տնկես :

1 Հիւթ (տեղիք) , պարարտ , հիւթեզ :

2 Սովոր . գիեկենայ :

3 Կորուտ . կորած , ձեղքած մասն :

4 Ի բառուէ , գրսանց , արտաքոյ :

5 Կապարեայ բարակ թիթեղն :

6 Յատակ :

7 Խծիւլ ըսուլ զծակտիւ հիւթով իւելք . Խոյւլւ կը գործածէ նաև Հերացին :

8 Փափ . կըսակի տեղն :

9 Թապէ , յայանապէս տաճիկ ճայն , բայց ուրիշներն հայացուցանեն՝ եածայ :

10 Հօս և 'ի գլ . կթ , Պօյնիայի , Պօյնիա անուանիքն կը լսուին . բայց 'ի յոյնն չհանդիսէցայ այս անուան :

11 Ես Սուրբայլք ուղղուս իուն . այս զլուխս ճիշդ ցքտայ 'ի յունին . բայց միւս հայ օր . կ'ըսէ՝ ոխ-պատ . որ և մեւ իսկ Սուրբայլք՝ են Ասորիք . բայց 'ի յոյն զիլք ԾԶ գլ . լ . ուր հիւանդութեանց կայ կիսուի , կայ նման բառ մը որ կ'ըսէ ըմեւի սոսրակոն , (քոնց օսրակօն) զոր յիշէ և թէոփրաստու :

12 Փառայ . բուսայ մի անուան :

13 Կոթէ . խոզան , կոթք բուսոց և խոտոց մնացեալ յետ հնձոց :

14 Կէնոյ հար , թէ որ կարելի է , հնար է :